Luys Lnyu®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍ - 2025

Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2025թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 6

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 8

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 11

ԱՄՓՈՓՈՒՄ 13

ՆԱԽԱԲԱՆ

Մարդկության զարգացման ներկա փուլում կոռուպցիան ընկալվում է որպես քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացմանը խոչընդոտող լրջագույն գործոններից մեկը: Այն բացասաբար է ազդում պետական կառավարման արդյունավետության, տնտեսական աճի կայունության և հասարակական վստահության ձևավորման վրա: Կոռուպցիոն երևույթները կարող են ունենալ բազմազան դրսևորումներ՝ սկսած հանրային միջոցների ոչ նպատակային օգտագործումից մինչև վարչական որոշումների ընդունման գործընթացների աղավաղում և քաղաքացիների իրավունքների սահմանափակում: Արդյունքում խաթարվում է պետական ինստիտուտների նկատմամբ վստահությունը, նվազում է կառավարման համակարգի կանխատեսելիությունն ու թափանցիկությունը, ինչը բացասաբար է անդրադառնում երկրի երկարաժամկետ զարգացման հեռանկարների վրա: Այս երևույթը հատկապես զգալի է և հանդիսանում է երկարաժամկետ զարգացման լուրջ սահմանափակում այն երկրներում, որոնցում կառավարման համակարգերը դեռևս լիարժեք կայացած չեն:

Կոռուպցիայի հետևանքները չեն սահմանափակվում միայն ներքին քաղաքական և սոցիալ-տնտեսական միջավայրով: Դրանք կարող են խոչընդոտել միջազգային տնտեսական համագործակցությանը, թուլացնել ներդրումային միջավայրը և խաթարել տարածաշրջանային ու գլոբալ կայունությունը: Կոռուպցիան դիտարկվում է որպես անվտանգային և ինստիտուցիոնալ լուրջ մարտահրավեր, քանի որ առավել հաճախ զուգակցվում է ապօրինի ֆինանսական հոսքերի, կազմակերպված հանցավորության և պետական կառավարման համակարգերի խոցելիության հետ:

Քանի որ կոռուպցիան միաժամանակ ունի տեղական և գլոբալ բնույթ, դրա կանխարգելումն ու դեմ պայքարը դառնում են առաջնահերթ խնդիր ինչպես առանձին պետությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների համար:

Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ արդյունավետ պայքարի համատեքստում, բնականաբար, կարևորագույն նշանակություն ունի դրա մակարդակի համադրելի չափումը: Քանակական գնահատականները հնարավորություն են տալիս գնահատել կառավարման որակը, համեմատել երկրները և հետևել միտումների փոփոխությանը ժամանակի ընթացքում: Նման գնահատումներ իրականացվում են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում: Մասնավորապես, այդ նպատակով առավել հաճախ կիրառվում են միջազգային վարկանիշային և գնահատման համակարգեր, որոնցից առավել հայտնի և ազդեցիկներից մեկը «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» «Կոռուպցիայի

ընկալման ինդեքս»-ն (ԿԸԻ) է, որը 1995 թվականից ի վեր հաշվարկվում է ամեն տարի և հրապարակվում «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» ամենամյա զեկույցներում: Զեկույցների շրջանակում գնահատվում է պետական հատվածում կոռուպցիայի ընկալման մակարդակը՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ առանձին երկրների և տարածաշրջանների կտրվածքով:

ԿԸԻ-ն դարձել է լայնորեն կիրառվող ցուցանիշ ինչպես պետական քաղաքականության մշակման, այնպես էլ գործարար ու ներդրումային միջավայրի գնահատման գործընթացներում: Ինդեքսի հաշվարկը հիմնված է 13 արտաքին աղբյուրների վրա, որոնք ներառում են միջազգային կազմակերպությունների, հետազոտական կենտրոնների և մասնավոր վերլուծական կառույցների տվյալներ: Ընդ որում, մեթոդաբանության կայունությունն ու համընդհանուր բնույթը թույլ են տալիս իրականացնել միջերկրային և միջժամանակային համեմատություններ՝ դարձնելով ԿԸԻ-ն կարևոր ցուցանիշ ինչպես քաղաքական որոշումների մշակման, այնպես էլ հանրային քննարկումների համար:

Օրերս հրապարակվել է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» «Կոռուպցիայի ընկալման ինդեքս - 2025» զեկույցը[1] (այսուհետ՝ Զեկույց), որտեղ դիտարկված է աշխարհի 182 երկիր:

Սույն աշխատանքը նվիրված է 2025-ի զեկույցի և դրա շրջանակներում Հայաստանի վերաբերյալ ուշագրավ փաստերի լուսաբանմանը:

Յուրաքանչյուր ամենամյա զեկույցի հրապարակումից հետո «Լույս» հիմնադրամը դրա վերաբերյալ կատարում է վերլուծություն[2]: Այդ վերլուծությունների սկզբում հակիրճ ներկայացվում են կոռուպցիայի ընկալման ինդեքսը և դրա հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև ներկայացվում են զեկույցի՝ գլոբալ մակարդակին վերաբերող առավել ուշագրավ փաստերը: Հաջորդիվ անդրադարձ է կատարվում Հայաստանում կոռուպցիայի ընկալման վերաբերյալ գնահատականներին և որոշ երկրների հետ Հայաստանի տարածաշրջանային համադրումներին: Վերջում աշխատանքը հակիրճ ամփոփվում է հիմնական եզրահանգումների շուրջ:

---

[1] Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.transparency.org/en/publications/corruption-perceptions-index-2025 (այցելվել է 11.02.2025թ.):

[2] Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վերաբերյալ «Լույս» հիմնադրամի կողմից 2019-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են հիմնադրամի պաշտոնական կայքում՝ https://www.luys.am/index.php?m=publications...:

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոռուպցիայի ընկալման ինդեքսն արտացոլում է երկրի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման աստիճանը և հաշվարկվում է գործարարների ու փորձագետների գնահատականների հիման վրա: Այն նպատակ ունի քանակապես ներկայացնելու կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ գործարարների և փորձագիտական հանրության ընկալումները:

Ինդեքսն արժեքներ է ընդունում 0-ից 100 միջակայքում, որտեղ 0-ն համապատասխանում է հասարակության լիակատար կոռումպացվածությանը, իսկ 100-ը՝ կոռուպցիայի լիակատար բացակայությանը:

ԿԸԻ-ի հաշվարկման գործընթացը բաղկացած է չորս հիմնական փուլերից (Գծապատկեր 1).

Գծապատկեր 1. Կոռուպցիայի ընկալման ինդեքսի հաշվարկման գործընթացը



1. Տվյալների աղբյուրների ընտրություն

Ինդեքսի հաշվարկի համար կիրառվող տվյալների աղբյուրների ընտրությունն իրականացվում է հստակ սահմանված սկզբունքների հիման վրա: Օգտագործվում են բացառապես այնպիսի աղբյուրներ, որոնք՝

- հնարավորություն են տալիս պետական հատվածում կոռուպցիայի ընկալումները ներկայացնելու քանակական արտահայտությամբ,
- հիմնվում են այնպիսի վստահելի ու վավերական մեթոդաբանական մոտեցումների վրա, որոնք թույլ են տալիս երկրների միջև համեմատական գնահատումն իրականացնելու միասնական տրամաբանությամբ,
- ապահովում են գնահատականների բավականաչափ լայն միջակայքեր՝ թույլ տալով տարբերակել բոլոր դիտարկվող երկրները,
- վերաբերում են բավականաչափ մեծ թվով երկրների,
- վարկանիշավորման համար հիմք են ծառայում երկրի փորձագետների և/կամ գործարարների գնահատականները,
- ներկայացվում են հեղինակավոր և վստահելի կազմակերպությունների կողմից,
- վարկանիշավորումն իրականացնում են բավարար պարբերականությամբ՝ առնվազն երկու տարին մեկ անգամ:

ԿԸԻ-ի հաշվարկման համար օգտագործվում են 12 կազմակերպությունների հետևյալ 13 տվյալների աղբյուրները[3]՝

1. AFDB - Աֆրիկյան զարգացման բանկի 2023թ. Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատում,
2. BF (SGI) - Բերթելսմանի հիմնադրամի կայուն կառավարման 2024թ. ցուցանիշներ,
3. BF (TI)* - Բերթելսմանի հիմնադրամի 2026թ. տրանսֆորմացիոն ինդեքս,
4. EIU - «Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ»-ի («Էկոնոմիստ» թերթի հետազոտական բաժնի) Երկրի ռիսկայնության 2025թ. վարկանիշ,
5. FH* - «Ֆրիդոմ Հաուզի» Անցումային փուլում գտնվող երկրներ, 2024թ.,
6. GI* - «Գլոբալ Ինսայթի» Երկրի ռիսկայնության 2024թ. վարկանիշ,
7. IMD - Մենեջմենթի զարգացման ինստիտուտի Համաշխարհային մրցունակության 2025թ. տարեգրքի Գործադիր ղեկավարների կարծիքի հարցում,

[3] https://images.transparencycdn.org/images/CPI-2025-Methodology.zip (այցելվել է 13.02.2026թ.):
* Աստղանիշով ներկայացված են այն 6 աղբյուրները, որոնք օգտագործվել են Հայաստանի 2025թ. ԿԸԻ-ի հաշվարկման համար:

8. PERC - Քաղաքական և տնտեսական ռիսկի խորհրդատվության Ասիական հետազոտական-վերլուծական տեղեկագիր, 2025թ.,
9. PRS* - Քաղաքական ռիսկերի միջազգային ծառայությունների Երկրի ռիսկայնության 2025թ. ուղեցույց,
10. WB - Համաշխարհային բանկի Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգի գնահատում, 2024թ.
11. WEF* - Համաշխարհային տնտեսական համաժողովի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում, 2025թ.,
12. WJP- Արդարադատության համաշխարհային ծրագրի Օրենքի գերակայության համաթվի 2025թ. փորձագիտական հարցում,
13. VDEM* - Ժողովրդավարության բազմազանության 2025թ. ծրագիր:

2. Տվյալների (ենթաինդեքսների) ստանդարտացում

Քանի որ տարբեր աղբյուրների կիրառած սանդղակները և հաշվարկման տրամաբանությունները չեն կարող ավտոմատ համադրելի լինել, ԿԸԻ-ի հաշվարկման համար տվյալները նախապես ստանդարտացվում են: Ստանդարտացումն իրականացվում է գնահատականների՝ 0-ից 100 միջակայքում նորմավորման միջոցով՝ երկու քայլով: Առաջին քայլով յուրաքանչյուր աղբյուրի դեպքում նախ՝ տվյալ երկրի արժեքից հանվում է համապատասխան վիճակագրական շարքի միջին թվաբանականը և ստացված արդյունքը բաժանվում է այդ շարքի ստանդարտ շեղման վրա: Երկրորդ քայլով՝ ստանդարտացված միավորները փոխակերպվում են ԿԸԻ սանդղակի՝ դրանք բազմապատկելով 2012թ. ԿԸԻ ստանդարտ շեղման արժեքով (20) և գումարելով 2012 թվականին ԿԸԻ-ի միջինը (45): Նշված մոտեցումը թույլ է տալիս համահարթեցնել տվյալների հավաքածուն և արդյունքները ներկայացնել ընդհանուր 0–100 տրամաբանությամբ:

3. ԿԸԻ-ի հաշվարկ

ԿԸԻ-ն հաշվարկվում է միայն այն պարագայում, երբ տվյալ երկրի համար 13 աղբյուրներից հասանելի են առնվազն 3-ի տվյալները: Երկրի ԿԸԻ-ն սահմանվում է որպես տվյալ երկրի համար առկա բոլոր ստանդարտացված ենթաինդեքսների միջին թվաբանական՝ կլորացված ամբողջ թվերի:

4. ԿԸԻ-ի անորոշության աստիճանի գնահատում

Հաշվարկման ավարտից հետո գնահատվում է ինդեքսի անորոշության մակարդակը՝ հաշվարկելով ստանդարտ սխալը և վստահության միջակայքը: Այս

փուլը թույլ է տալիս հասկանալ, թե որքանո՞վ կայուն և հուսալի է տվյալ երկրի համար հաշվարկված ցուցանիշը. որքան փոքր է ստանդարտ սխալի չափը, այնքան բարձր է արդյունքի վստահելիությունը:

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2025 թվականի «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» զեկույցում ընդգրկված են 182 երկիր և տարածք, որոնց համար 13 անկախ աղբյուրների տվյալների հիման վրա գնահատվել է պետական հատվածում կոռուպցիայի ընկալման մակարդակը:

2025թ. զեկույցն էապես տարբերվում է նախորդ տարիների որոշ հրապարակումներից իր հիմնական շեշտադրումներով: Եթե նախորդ տարիների շատ զեկույցներում կոռուպցիան դիտարկվում էր կոնկրետ ոլորտային մարտահրավերների համատեքստում (2024-ի զեկույցում, օրինակ, այն դիտարկված էր կլիմայական քաղաքականության արդյունավետության վրա դրա ազդեցության տեսանկյունից), ապա այս տարվա զեկույցում ուշադրությունը կենտրոնացված է կառավարման համակարգերի հիմքում ընկած ընդհանուր ինստիտուցիոնալ խնդիրների վրա, մասնավորապես, հատուկ ընդգծվում է, որ ժողովրդավարական ինստիտուտների թուլացումը, որպես կանոն, զուգակցվում է կոռուպցիոն ռիսկերի ավելացմամբ:

Զեկույցի հիմնական ուղերձներից մեկն այն է, որ առավել հաճախ կոռուպցիայի ընկալման բարձր մակարդակ ունեն այն երկրները, որոնցում դատական համակարգերը չեն գործում բավարար անկախությամբ, իսկ իրավունքի գերակայությունը ենթարկվում է քաղաքական ազդեցությունների: Այս իմաստով, Զեկույցում հստակորեն ընդգծվում է, որ կոռուպցիան կապված է ոչ միայն քաղաքական կամ տնտեսական վարքագծի, այլ նաև արդարադատության համակարգի որակի հետ, իսկ հակակոռուպցիոն օրենքների և ինստիտուտների առկայությունն ինքնին չի կարող ցանկալի արդյունք ապահովել՝ առանց դրանց արդյունավետ ու անկողմնակալ կիրառման հնարավորությունների երաշխավորման:

Միաժամանակ, զեկույցում հատուկ ընդգծվում է ժողովրդավարական ինստիտուտների թուլացման և քաղաքացիական վերահսկողության սահմանափակման դերը կոռուպցիայի խորացման գործընթացում: Ազատ մամուլի, քաղաքացիական հասարակության և անկախ վերահսկող մարմինների գործունեության սահմանափակումը ձևավորում է միջավայր, որտեղ կոռուպցիոն գործելակերպը դառնում է նվազ տեսանելի և, հետևաբար, նվազ պատժելի: Այս համատեքստում ԿԸԻ-ն կարելի է դիտարկել որպես ժողովրդավարության որակի և հանրային վերահսկողության արդյունավետության անուղղակի ցուցիչ:

Զեկույցի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ կոռուպցիայի ընկալման առումով համաշխարհային պատկերը վատթարանում է: ԿԸԻ-ի համաշխարհային միջինը 2025-ին կազմել է 42 միավոր, որը վերջին տասնամյակում գրանցված ամենացածր ցուցանիշն է և նախորդ տարվա համեմատ նվազել է 1 միավորով: Ի դեպ, ըստ հակակոռուպցիոն փորձագետների, այն երկրներում, որոնցում ԿԸԻ-ն 50 միավորից ցածր է, կոռուպցիան առավել հաճախ է հանդիսանում լուրջ հիմնահարց: Մինչդեռ 182 երկրներից 122-ի (ավելի քան երկու երրորդի) ինդեքսը 50-ից ցածր է: Ավելին, ընդամենը 5 երկրի ինդեքսն է գերազանցում 80 միավորը, այն դեպքում, երբ տասը տարի առաջ այդպիսի երկրները 12-ն էին:

Համաձայն Զեկույցի՝ վերջին 14 տարիների ընթացքում 181 երկրներից միայն 31-ում է ԿԸԻ-ի բարելավում արձանագրվել, մինչդեռ 50 երկրներում այն նվազել է:

Գծապատկեր 2. 2012-2025թթ. ընթացքում ԿԸԻ-ի փոփոխությունները, երկիր



Զեկույցում նշված է, որ 2012-ից ի վեր ոչ հակամարտային գոտիներում սպանվել է 829 լրագրող, որոնցից 150-ի լրագրողական հետաքննության թեմատիկան վերաբերել է կոռուպցիոն հիմնախնդիրներին: Նրանցից 139-ը սպանվել է 50-ից պակաս ԿԸՀ ունեցող երկրներում:

Համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականներն ավանդաբար զբաղեցնում են կայացած ժողովրդավարական ինստիտուտներ ունեցող երկրները: 2025 թվականին այն 89 միավորով կրկին գլխավորում է Դանիան, որին հաջորդում են Ֆինլանդիան (88 միավոր) և Սինգապուրը (84 միավոր):

Փոխարենը, ըստ Զեկույցի՝ ԿԸԻ-ի ամենացածր արժեքները, որպես կանոն, գրանցվում են ավտորիտար երկրներում: 2025 թվականի զեկույցում վերջին երեք հորիզոնականները զբաղեցնում են Վենեսուելան (10 միավոր), Սոմալին (9 միավոր) և Հարավային Սուդանը (9 միավոր):

Ընդհանրապես, դժվար է զուգադիպություն համարել այն, որ արևմտյան-գլոբալիստական օրակարգից շեղված կամ դրան դեմ գնացող գրեթե բոլոր երկրներում ԿԸԻ-ն տարեցտարի նվազում է: Մասնավորապես, վերջին հինգ

տարիների ընթացքում Բելառուսի ԿԸԻ-ն նվազել է 10, Ռուսաստանինը՝ 7, Կուբայինը՝ 6, Վրաստանինը՝ 5, Սերբիայինը՝ 5, Սլովակիայինը՝ 4, Վենեսուելայինը՝ 4, Հունգարիայինը՝ 3, Իրանինը՝ 2 միավորով: Փոխարենը, 2021-ի համեմատ 4 միավորով աճել է Ուկրաինայի (նույնիսկ հայտնի կոռուպցիոն սկանդալը չի խանգարել, որպեսզի այս երկրի ինդեքսը 2025-ին նախորդ տարվա համեմատ 1 միավորով աճի) և 6 միավորով՝ Մոլդովայի ինդեքսները: Այս պարագայում, չի բացառվում, որ նկատի ունենալով Հայաստանի իշխանությունների նկատմամբ արևմտյան-գլոբալիստական ուժերի բացահայտ լոյալ-հովանավորչական վերաբերմունքը, վերջին հինգ տարիների ընթացքում ԿԸԻ-ի 3 միավորով նվազումը կարող է նշանակել, որ իրականում մեր երկրում բացասական զարգացումներն այնքան խորն են եղել, որ պարզապես հնարավոր չի եղել դրանք ընդհանրապես «չնկատելու տալ»:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի ԿԸԻ-ն 2025 թվականին 2024-ի համեմատ նվազել է մեկ միավորով՝ կազմելով 46 միավոր: Ըստ ԿԸԻ-ի կազմված՝ 182 երկիր ներառող համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է 65-րդ հորիզոնականը՝ 2024-ի 63-րդ հորիզոնականի դիմաց: Հայաստանին հավասար ԿԸԻ ունեն ևս չորս երկրներ՝ Քուվեյթը, Չեռնոգորիան, Նամիբիան և Սենեգալը:

Գծապատկեր 3. Հայաստանի ԿԸԻ-ն և վարկանիշային դիրքն ըստ ԿԸԻ-ի, 2012-2025թթ.



Բուն զեկույցում Հայաստանի վերաբերյալ տեքստային հիշատակում չկա, սակայն Զեկույցին կցված տվյալների և արդյունքների աղյուսակներից բավական արժեքավոր եզրահանգումներ կարելի է անել:

Հայաստանի 2025-ի ԿԸԻ-ն հաշվարկելու համար օգտագործվել են վեց ենթաինդեքսներ: Ի դեպ, գործող մեթոդաբանությամբ ԿԸԻ-ին հաշվարկվում է

2012-ից ի վեր: Այդ տասնչորս տարիներից վերջին տասի դեպքում օգտագործվել են նույն վեց ենթաինդեքսները, առաջին երեք տարիներին VDEM ենթաինդեքսի փոխարեն օգտագործվել է WB ենթաինդեքսը, իսկ 2015-ին ԿԸԻ-ն հաշվարկվել է առանց VDEM ենթաինդեքսի՝ պարզապես օգտագործելով միայն մնացած հինգ ենթաինդեքսները: Աղյուսակ 1-ում ներկայացված է Հայաստանի ԿԻՀ-ի, վարկանիշային դիրքի և ենթաինդեքսների վերջին տասը տարիների դինամիկան:

Աղյուսակ 1. ԿԸԻ-ի բաղադրիչները ՀՀ-ում, 2016-2025թթ.

Տարի/Ցուցանիշ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս		BF (TI)	FH	GI	PRS	VDEM	WEF
	Դիրք	Ինդեքս						
2016	113	33	28	41	34	32	17	45
2017	107	35	33	42	35	32	20	47
2018	105	35	33	39	35	32	21	51
2019	77	42	45	39	47	32	32	60
2020	60	49	45	44	47	32	63	60
2021	58	49	45	44	47	32	59	66
2022	63	46	45	44	47	32	55	53
2023	62	47	49	44	47	32	55	54
2024	63	47	51	44	46	33	50	56
2025	65	46	51	44	46	33	50	53

Ծանոթագրություն. Աղյուսակում ներկայացված հապավումներն ունեն հետևյալ բովանդակությունը. BF (TI)՝ Bertelsmann Foundation Transformation Index, FH՝ Freedom House Nations in Transit, GI՝ Global Insights Country Risk Ratings, PRS՝ Political Risks Services International Country Risk Guide, VDEM՝ Varieties of Democracy Project, WEF EOS՝ World Economic Forum Executive Opinion Survey:

2024 թվականի համեմատ՝ 2025 թվականին փոփոխվել է միայն Համաշխարհային տնտեսական համաժողովի «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում» (WEF EOS) ենթաինդեքսը՝ նվազելով 3 միավորով: Ի դեպ, այս ենթաինդեքսի առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թվականին, որի համեմատ 2025-ի արժեքը 13 միավորով պակաս է: Ենթաինդեքսի 2025թ. արժեքը գրեթե համադրելի է 2018-ի արժեքի հետ: Իսկ դա չափազանց մտահոգիչ է. նկատի ունենալով, որ այս ենթաինդեքսով գնահատվում է տնտեսական ինստիտուտների, բիզնես միջավայրի, մակրոտնտեսական միջավայրի, տեխնոլոգիական առաջընթացի, ենթակառուցվածքների և նմանօրինակ այլ համակարգերի արդյունավետությունը, ստացվում է, որ վերջին յոթ տարիներին այս ասպարեզում առաջընթաց, կարելի է ասել, չկա:

«Ֆրիդոմ Հաուզի» FH ենթաինդեքսով գնահատվում է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը: Ենթաինդեքսի հաշվարկման հիմքում ընկած են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են տնտեսական ազատությունը, օրենսդրական մեխանիզմների առկայությունը և դրանց կիրառելիությունը, հասարակության ու լրատվամիջոցների վերաբերմունքը պաշտոնական

կոռուպցիայի նկատմամբ և այլն: Քանի որ այս ենթաինդեքսը վեց տարի շարունակ՝ 2020 թվականից ի վեր, չի փոխվել, ստացվում է, որ ըստ «Ֆրիդոմ Հաուզի»՝ վերջին տարիներին այս ոլորտում Հայաստանում առաջընթաց չի արձանագրվել:

2025-ին Ժողովրդավարության բազմազանության ծրագրի VDEM ենթաինդեքսը 13 միավորով պակաս է 2020-ի արժեքից: Դրանով գնահատվում է պետական կառավարման տարբեր մակարդակներում կոռուպցիայի առկայությունն ու տարածվածությունը: Դիտարկվում են քաղաքական կոռուպցիային, դատական և գործադիր իշխանությունների կոռուպցիոն գործարքներին, ինչպես նաև ժողովրդավարական ինստիտուտների վրա կոռուպցիայի ազդեցությանը վերաբերող հարցեր: Համաձայն մեթոդաբանության՝ այս ենթաինդեքսը հաշվարկելիս փաստացի տվյալների և քաղաքական ու ակադեմիական փորձագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա ստացվող տվյալների քանակները մոտավորապես հավասար են: **Ենթաինդեքսի գծով վերջին տարիներին գրանցված զգալի նահանջը, ըստ էության, խոսում է այն մասին, որ այս հեղինակավոր միջազգային ծրագրի կարծիքով Հայաստանում վերջին տարիներին ժողովրդավարության ասպարեզում զգալի հետընթաց և կոռուպցիայի ազդեցության մտահոգիչ աճ է արձանագրվել:**

Համաձայն «ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության»[4]՝ Հայաստանի ԿԸԻ-ի 2026թ. թիրախային ցուցանիշը 55 միավոր է: Այսինքն, ըստ ռազմավարության՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» կողմից ՀՀ համար հաշվարկվող ԿԸԻ-ի ցուցանիշը 2026-ի համար պետք է 2023-ի 47 միավորին գերազանցի 8 միավորով: Մինչդեռ անցնող ժամանակահատվածում ԿԸԻ-ն փոխանակ կտրուկ աճի, նույնիսկ նվազել է՝ 1 միավորով: Դա նշանակում է, որ ռազմավարությամբ սահմանված թիրախին հասնելու համար ռազմավարության վերջին մեկ տարվա ընթացքում ԿԸԻ-ն պետք է աճի 9 միավորով: Իսկ Հայաստանի պատմության մեջ այդպիսի սրընթաց աճ երբևիցե չի գրանցվել: Այդ մասին նշել է նաև «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» հակակոռուպցիոն կենտրոնի ծրագրերի ղեկավար Վարուժան Հոկտանյանը կոռուպցիայի ընկալման համաթվի վերաբերյալ օրերս հրավիրված քննարկմանը[5]:

[4] https://www.arlis.am/acts/files/298346/... (այցելվել է 13.02.2026թ.):
[5] https://youtu.be/PAjR2GdHUo0 (այցելվել է 13.02.2025թ.):

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Տարբեր տարածաշրջաններում կոռուպցիայի ընկալման միտումները նկատելիորեն տարբերվում են:

«Արևմտյան Եվրոպա և Եվրոպական Միությունը» միջին ԿԸԻ-ով առաջատար տարածաշրջանն է: Այս տարածաշրջանի միջին ԿԸԻ-ն 2024-ի համեմատ մնացել է անփոփոխ՝ 64 միավոր: Հետնապահը «Անդրսահարյան Աֆրիկա» տարածաշրջանն է՝ 32 միավոր միջին ԿԸԻ-ով:

Գծապատկեր 4-ում ներկայացված են Հայաստանի Հանրապետության, աշխարհի և 6 տարածաշրջանների 2025 թվականի ԿԸԻ-ների և 2024-ի համեմատ փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Գծապատկեր 4. ԿԸԻ-ի արժեքները և 2024-ի համեմատ փոփոխությունները ՀՀ-ում և աշխարհի տարբեր տարածաշրջաններում



Գծապատկեր 4-ից երևում է, որ մեր տարածաշրջանը՝ «Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիան», 34 միավոր միջին ԿԸԻ-ով գերազանցում է միայն «Անդրսահարյան Աֆրիկային»:

Հայաստանի ԿԸԻ-ն իր խմբի՝ «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայ» տարածաշրջանի միջին գնահատականից բարձր է:

Այս անգամ ևս, Հայաստանը տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում զիջում է միայն 50 միավոր ԿԸԻ ունեցող Վրաստանին, որը տարածաշրջանի միակ երկիրն է, որի ԿԸԻ-ն ցածր չէ «ապահովության» շեմից (այն հավասար է հենց շեմային արժեքին): Տարածաշրջանի երկրներից Հայաստանի

չափ՝ 46 միավոր, ունի Չեռնոգորիան: Մեր տարածաշրջանում համաշխարհային միջինից բարձր է ընդամենը չորս երկրի ԿԸԻ-ն (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում, 2024-2025թթ.

N	Երկիր	ԿԸԻ 2025	ԿԸԻ 2024	ԿԸԻ-ի փոփոխությունը	Դիրք 2025	Դիրք 2024	Դիրքի փոփոխությունը
1	Վրաստան	50	53	-3	56	53	3
2	Հայաստան	46	47	-1	65	63	2
3	Չեռնոգորիա	46	46	0	65	65	0
4	Կոսովո	43	44	-1	76	73	3
5	Մոլդովա	42	43	-1	80	76	4
6	Հյուսիսային Մակեդոնիա	40	40	0	84	88	-4
7	Ալբանիա	39	42	-3	91	80	11
8	Ղազախստան	38	40	-2	96	88	8
9	Ուկրաինա	36	35	1	104	105	-1
10	Բոսնիա և Հերցեգովինա	34	33	1	109	114	-5
11	Սերբիա	33	35	-2	116	105	11
12	Բելառուս	31	33	-2	124	114	10
13	Թուրքիա	31	34	-3	124	107	17
14	Ուզբեկստան	31	32	-1	124	121	3
15	Ադրբեջան	30	22	8	130	154	-24
16	Ղրղզստան	26	25	1	142	146	-4
17	Ռուսաստան	22	22	0	157	154	3
18	Տաջիկստան	19	19	0	166	164	2
19	Թուրքմենստան	17	17	0	167	165	2

Խմբում վերջին երեք հորիզոնականները զբաղեցնում են Ռուսաստանը (22 միավոր և համաշխարհային վարկանիշային աղյուսակի 157-րդ հորիզոնական), Տաջիկստանը (19 միավոր, վարկանիշային աղյուսակի 166-րդ հորիզոնական) և Թուրքմենստանը (17 միավոր, 167-րդ հորիզոնական): Տարածաշրջանային խմբի երկրներից թե՛ ԿԸԻ-ի և թե՛ վարկանիշային դիրքի առումով ամենամեծ բարելավումն արձանագրած երկիրն Ադրբեջանն է՝ համապատասխանաբար 8 միավոր և 24 հորիզոնական: ԿԸԻ-ի ամենամեծ նվազումը (3 միավոր) արձանագրվել է խմբի երեք երկրներում՝ Վրաստանում, Ալբանիայում և Թուրքիայում: Խմբի երկրների թվում Թուրքիան ունեցել է վարկանիշային դիրքի ամենանշանակալի վատթարացումը՝ 17 հորիզոնական: Տարածաշրջանի երկու երկրներում՝ Սերբիայում և Թուրքիայում, 2025-ին գրանցվել է ԿԸԻ-ի պատմական նվազագույն մակարդակը:

Այս անգամ ևս ԵԱՏՄ անդամ երկրների թվում ԿԸԻ-ով առաջատարը Հայաստանն է: Ղազախստանի ԿԸԻ-ն 38 միավոր է, Բելառուսինը՝ 31, Ղրղզստանինը՝ 26, Ռուսաստանինը՝ 22:

Սահմանակից երկրներից միայն համաշխարհային վարկանիշային աղյուսակում 56-րդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանի ԿԸԻ-ն է գերազանցում Հայաստանի ցուցանիշին: Թուրքիան 31 միավոր ԿԸԻ-ով 124-րդ հորիզոնականում է, Ադրբեջանը՝ 30 միավորով 130-րդում, իսկ Իրանը՝ 23 միավորով 153-րդում (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Կոռուպցիայի ընկալումը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2023-2025թթ.



Գծապատկերից երևում է, որ 2023-ի համեմատ ԿԸԻ-ի (նաև վարկանիշային դիրքի) բարելավում Հայաստանի հարևան երկրներից ունեցել է միայն Ադրբեջանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով նշենք.

- **Հայաստանի կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԿԸԻ), 2025 թվականին 2024-ի համեմատ նվազելով մեկ միավորով, կազմել է 46 միավոր: 182 երկիր ներառող, ըստ ԿԸԻ-ի կազմված, համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 65-րդ հորիզոնականում է: Եվս չորս երկրներ՝ Քուվեյթը, Չեռնոգորիան, Նամիբիան և Սենեգալը, ըստ աղյուսակի, գտնվում են նույն՝ Հայաստանին հավասար հորիզոնականում:**

  Քանի որ Հայաստանի ԿԸԻ-ն նախորդ տարվա համեմատ նվազել է, ստացվում է, որ մեր երկիրն ավելի է «հեռացել» հակակոռուպցիոն բաղձալի շեմից. հակակոռուպցիոն փորձագետների կարծիքով, եթե երկրում ԿԸԻ-ն 50 միավորից ցածր է, կոռուպցիան լուրջ հիմնահարց է՝ այն դառնում է կառավարման լուրջ խնդիր:

2023 թվականին ընդունված «ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության» համաձայն՝ Հայաստանի ԿԸԻ-ի 2026թ. թիրախային ցուցանիշը 55 միավոր է, այսինքն՝ նպատակադրված է, որ 2026-ի ԿԸԻ-ի ցուցանիշը 2023-ի 47 միավորին գերազանցի 8 միավորով: Իսկ իրականում, անցած ժամանակահատվածում ԿԸԻ-ին, փոխանակ կտրուկ աճելու, դեռ մի բան էլ նվազել է՝ 1 միավորով: Իսկ դա նշանակում է, որ չափազանց անիրատեսական է, որ մինչև ռազմավարության ժամկետի ավարտը մնացած մեկ տարվա ընթացքում ԿԸԻ-ն աճի 9 միավորով, հաշվի առնելով, որ Հայաստանի պատմության մեջ այդպիսի սրընթաց աճ երբևիցե չի գրանցվել:

- **Գործող իշխանության համար խիստ մտահոգիչ պետք է լինի այն փաստը, որ 2025-ին Ժողովրդավարության բազմազանության ծրագրի VDEM ենթաինդեքսը 13 միավորով պակաս է 2020-ի (վերջին 10 տարիների ընթացքում ամենաբարձր արժեքը գրանցած տարվա) արժեքից, քանի որ այս ենթաինդեքսով գնահատվում է պետական կառավարման տարբեր մակարդակներում կոռուպցիայի առկայությունն ու տարածվածությունը:** Ենթաինդեքսի հաշվարկման համար դիտարկվում են քաղաքական կոռուպցիային, դատական և գործադիր իշխանությունների կոռուպցիոն գործարքներին, ինչպես նաև ժողովրդավարական ինստիտուտների վրա կոռուպցիայի ազդեցությանը վերաբերող հարցեր: **Ենթաինդեքսի գծով վերջին տարիներին գրանցված զգալի նահանջը, ըստ էության, խոսում է այն մասին, որ այս հեղինակավոր միջազգային ծրագիրը Հայաստանում վերջին տարիներին ժողովրդավարության ասպարեզում զգալի հետընթաց և կոռուպցիայի ազդեցության մտահոգիչ աճ է արձանագրել:**

- **Հայաստանի ԿԸԻ-ում ներառված WEF EOS ենթաինդեքսը (Համաշխարհային տնտեսական համաժողովի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում) 2025-ին 2024-ի համեմատ նվազել է 3 միավորով և 2021-ի ցուցանիշից (այս ենթաինդեքսի առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թվականին) 13 միավորով պակաս է: Նկատի ունենալով, որ այս ենթաինդեքսով գնահատվում է տնտեսական ինստիտուտների, բիզնես միջավայրի, մակրոտնտեսական միջավայրի, տեխնոլոգիական առաջընթացի, ենթակառուցվածքների և նմանօրինակ այլ համակարգերի արդյունավետությունը, ստացվում է, որ ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի՝ վերջին յոթ տարիներին այս ասպարեզում առաջընթաց չկա:**

- **Միջազգային հեղինակավոր «Ֆրիդոմ Հաուզի» կարծիքով, առաջընթաց չկա կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության առումով: Բանն այն է, որ ԿԸԻ-ի ենթաինդեքսներից մեկը «Ֆրիդոմ Հաուզի»՝ անցումային փուլում գտնվող երկրներին վերաբերող FH ենթաինդեքսն է, որով մի քանի կարևոր հարցերի հիման վրա գնահատվում է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը: Մասնավորապես, համաթիվը հաշվարկելիս հաշվի են առնվում այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են տնտեսական ազատությունը, օրենսդրական մեխանիզմների առկայությունը և դրանց կիրառելիությունը, հասարակության ու լրատվամիջոցների վերաբերմունքը պաշտոնական կոռուպցիայի նկատմամբ և այլն: Քանի որ այս ենթաինդեքսը վեց տարի շարունակ (2020 թվականից ի վեր), չի փոխվել, ստացվում է, որ ըստ «Ֆրիդոմ Հաուզի»՝ վերջին տարիներին այս ոլորտում Հայաստանում առաջընթաց չի արձանագրվել:**

- Համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջատար և հետնապահ եռյակները չեն փոխվել: Առաջատարներն են Դանիան (89 միավոր ԿԸԻ-ով), Ֆինլանդիան (88 միավոր) և Սինգապուրը (84 միավոր): Աղյուսակը եզրափակում են Վենեսուելան (10 միավոր), Սոմալին (9 միավոր) և Հարավային Սուդանը (9 միավոր):

- «Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի երկրների լավագույն եռյակը նույնպես չի փոխվել 2024 թվականի համեմատ՝ Վրաստան (50 միավոր ԿԸԻ-ով համաշխարհային վարկանիշային աղյուսակի 56-րդ հորիզոնական), Հայաստան (46 միավոր և 65-րդ հորիզոնական) և Չեռնոգորիա (46 միավոր և 65-րդ հորիզոնական): Խմբում ամենացածր ԿԸԻ ունեն Ռուսաստանը (22 միավոր և 157-րդ հորիզոնական), Տաջիկստանը (19 միավոր և 166-րդ հորիզոնական) և Թուրքմենստանը (17 միավոր և 167-րդ հորիզոնական):

  Մեր տարածաշրջանը 34 միավոր միջին ԿԸԻ-ով աշխարհի վեց տարածաշրջանների թվում հինգերորդն է՝ գերազանցելով միայն Անդրսահարյան Աֆրիկային:

- 2025-ին ևս Հայաստանը ԵԱՏՄ անդամ երկրների թվում ԿԸԻ-ով առաջատարն է: Ղազախստանի ԿԸԻ-ն 38 միավոր է, Բելառուսինը՝ 31, Ղրղզստանինը՝ 26, Ռուսաստանինը՝ 22:

- Սահմանակից երկրներից Հայաստանը ԿԸԻ-ով զիջում է միայն 50 միավոր ԿԸԻ ունեցող և համաշխարհային վարկանիշային աղյուսակում 56-րդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանին: Թուրքիան 31 միավորով 124-րդ հորիզոնականում է, Ադրբեջանը 30 միավորով 130-րդն է, իսկ Իրանը՝ 23 միավորով 153-րդը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: